ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 1935 Թ.
ԿՈՆԿՈՒՐՍ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ

ЦЕНТР. ГОС... ТЕКА ФССР
Инв. № 1240
352(47с)-22

# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԿՈՒՐՍ - ՄՐՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԵՐՊՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

352
Հ-20

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
ԿԱԶՄԲԱԺՆԻ
ԲԱԳՈՒ — 1935

25 FEB. 2013
352
Հ-20

Խմբագրեց՝ Հ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Թարգմանեց՝ Մ. ԴԱՎԹՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 5503
Заказ № 2763
Тираж 2000
Тип. „ш Интернационал“

ՀՀ Ազգային գրադարան
NL0196929

05 JAN 2010

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 1935 Թ.
ԿՈՆԿՈՒՐՍ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է Համաադրբեջանյան Կենտրոնական կոնկուրսային հանձնաժողովի նիստում 1935 թ. հունիսի 15-ին:

# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՆԿՈՒՐՍ-ՄՐՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԵՐՊՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Համաձայն Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության 1395 թվի հունիսի 4-ի «1935 թվին խորհուրդների կոնկուրս մրցություն անցկացնելու մասին» վորոշմանը, Ադրբեջանի գյուղական խորհուրդները պետք է լայնորեն և ակտիվությամբ ընդգրկվեն գյուղական խորհուրդների համամիութենական կոնկուրս մրցությանը՝ ֆինանսական աշխատանքը լավագույն կերպով կազմակերպելու համար:

Գյուղական խորհուրդների կոնկուրս-մրցությունները պետք է զգալիորեն բարելավեն խորհուրդների ֆինանսական աշխատանքի վիճակը, բարձրացնեն դասակարգային զգոնությունը, ֆինանսական բյուջետային, հարկային և ապահովագրական աշխատանքներում:

31.05.2013

39800

*Գյուղի աշխատավորության նախաձեռնության ու ինքնագործունեության լայն զարգացման հիման վրա ամրապնդելով և բարելավելով ֆինանսական սեկցիաների ու պատգամավորական խմբակների աշխատանքը, կոնկրետ լծված գյուղխորհուրդները պետք է կատարեն հետևյալ արտադրական ցուցմունքները:*

## I. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ֆինանս – բյուջետային կարգապահության խստագույն պահպանման հիման վրա ճիշտ և իր ժամանակին կազմել և կատարել 1935 թվի բյուջեն:

*Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.*

*ա. Գյուղխորհրդի պլենումում ներգրավելով լայն հասարակայնությունը քննել գյուղական բյուջեն:*

*բ. Գյուղբյուջեի մեջ մտնող յուրաքանչյուր հիմնարկի համար կազմել առանձին նախահաշիվ:*

*գ. Կազմել մուտքի և ելքի զանձարկղային պլանները, առանձնացնելով ուսուցիչների և բուժաշխատողների աշխատավարձի ֆոնդերը և զանձարկղային պլանները հաստատել գյուղխորհրդի պլենումում:*

*դ. Լրիվին կատարել գյուղական բյուջեի եկամտային աղբյուրները:*

*ե. Թույլ չտալ պետական բյուջեի միջոցները փոխարինաբար գյուղական բյուջե անցկացնելը և խնամքով պահպանել բոլոր դրամական գումարներն ու փաստաթղթերը:*

*զ. Ճիշտ կազմակերպել ազգաբնակչության պարտադիր և կամավոր վճարումների գծով գյուղխորհուրդը մտնող բոլոր միջոցների ընդունումը, պահպանումը և հանձնել պետբանկ կամ խնայդրամարկղ, ըստ որում անպայման յուրաքանչյուր վճարողին տալ սահմանված ձևի կտրոն, ճշտորեն լրացնել այն և ապահովել կտրոնային գրքույկների ճիշտ հաշվառումը, պահպանումն ու գործածությունը:*

*է. Իր ժամանակին ֆինանսավորել գյուղբյուջեի միջոցներով պահվող բոլոր ձեռնարկություններին և հիմնարկներին՝ բյուջեյով նախատեսված սահմաններում:*

*ը. Խստորեն խնայել վարչա-կառավարչական ծախսերը:*

*թ. Իր ժամանակին վճարել աշխատավարձը՝ հատկապես ուսուցիչներին և բուժաշխատողներին:*

*ժ. Բոլոր յեռամսյակներում գյուղխորհրդի լայն պլենումներում, նախագահության նիստերում, ինչպես նաև կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ժողովներում հաշվետվություն տալ գյուղբյուջեի կատարման մասին:*

*ի. Գյուղական բյուջեի մեջ մտնող հիմնարկների կազմից դրամը ծախսելու գործը խստորեն հսկել, իր ժամանակին հաշիվ պահանջել ավանսներ ստացած անձնավորություններից և հիմնարկներից, մանրակրկիտ կերպով ստուգել այդ հաշվետվությունները և թույլ չտալ ավանսային պարտքեր:*

*լ. Իր ժամանակին պատրաստել և ճիշտ կազմել* 1936 *թվի գյուղական բյուջեն, նախաձեռնություն ցերևան բերել յեկամտային նոր աղբյուրներ որոնելու գործում:*

2. Թույլ չտալ վորևէ անօրինական տեղական հարկ, միջոցների հավաք, փոխառությունն իրացնելու ժամանակ և խնայդրամարկղներում ավանդներ դնելու գործում կամավորության խախտումը. *Թույլ չտալ,*





ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՌ-ի ա. ССР
Ա. Մյասնիկյանի
12 921-63

վոր կոլտնտեսականների հաշվին կոլտնտեսությունից ապահովագրական գանձումներ, փոխառության վճարումների դեպքեր լինեն, թույլ չտալ առանց կոլտնտեսության գիտության նրա ընթացիկ հաշվից դրամական գումարներ դուրս գրելու դեպքեր:

3. Որինակելիորեն դնել ֆինանսական հաշվառքն ու հաշվետվությունը.

*ա. Ճիշտ վարել ֆինանսական հաշվառքը և գյուղական բյուջեի կատարման գրքերն ու փաստաթղթերը:*

*բ. Իր ժամանակին և ճշտորեն ձևակերպել դրամական միջոցների և ունեցվածքի ընդունումն ու ծախսումը:*

*գ. Ճիշտ վարել գյուղհարկի դրույքային ապահովագրման, ինքնահարկման, փոխառության և այլն գծով վճարողների անձնահաշիվները և հաշվեկշռային ցուցակները:*

*դ. Ճշտորեն և իր ժամանակին շրջանային կազմակերպություններին ներկայացնել սահմանված հաշվետվությունները:*

4. Լիովին կատարել ազգաբնակչության յուրաքանչյուր վճարման գծով միջոցների մոբիլիզացիայի պլանը, *վերացնելով բոլոր պարտադիր վճարումների գծով յեղած պարտքերը:*

5. Որինակելիորեն անցկացնել հարկային բոլոր աշխատանքները

*Դրա համար գյուղխորհրդին անհրաժեշտ է.*

*ա. Բարձրորակ անցկացնել գյուղհարկը, ինքնահարկումն ու դրույքային ապահովագրությունը, ճիշտ և լրիվ կատարել տնտեսության, անասունների*



*և գյուղհարկով հարկադրվող մյուս օբյեկտների հաշվառումը:*

*բ. Լրիվ հայտնաբերել և հարկադրել կուլակային տնտեսությունները, թույլ չտալ աշխատավոր տնտեսություններին հարկադրել այն կարգով ու սահմաններում, ինչ սահմանված է կուլակային տնտեսությունների համար:*

*գ. Լիովին տալ օրենքով սահմանված արտոնությունները ու կատարել զեղչումները, վճարողներին իր ժամանակին տեղեկագրերը հանձնել, յուրաքանչյուր տնտեսությունից իր ժամանակին և լիովին գանձել գանձման ենթակա վճարումները:*

*դ. Կազմակերպել գյուղական հարկային հանձնաժողովի ակտիվ աշխատանքը:*

6. Իր ժամանակին ուշադրությամբ և ճշտությամբ քննել հարկային, ապահովագրական վճարումներ կատարողների փոխառության բաժնեգրվողների և ավանդատուների դիմումները:

7. *Իր ժամանակին և ճշտությամբ լիկվիդացիայի յենթարկել ու վճարել ապահովագրական վնասները, ակտիվորեն պայքարել ապահովագրական վոչ ճիշտ փոխհատուցումներ ստանալու դեմ, սիստեմատիկորեն ստուգելով ապահովագրված ունեցվածքը: Գերդրույքային կամավոր կոլեկտիվ ապահովագրությամբ գերադասապես ընդգրկել կոլտնտեսությունները, կոլտնտեսականների տնտեսություններին և աշխատավոր մենատնտեսներին. լայնորեն զարգացնել տնային ունեցվածքի կոլեկտիվ ապահովագրումը և հսկել փոխհատուցումների ժամանակին վճարման գործին: Հասնել գյուղական ապահովագրական հանձնաժո*

ղովների և ազդանշանային պոստերի ակտիվ աշխատանքին: Կատարել բոլոր նախազգուշական միջոցառումները — Պետական կողմից բաց թողնված միջոցներով սատկած անասունների համար գերեզմանների կառուցում, հորերի փորումը, ջրի համար առուների մաքրումը:

8. Որինակելիորեն դնել պետփոխառությունների գծով աշխատանքը

Դրա համար գյուղական խորհուրդը պետք է.

ա) Հարյուր տոկոսով ընդգրկել կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին յերկրորդ հնգամյակի փոխառության 3-րդ թողարկման բաժանորդությամբ:

բ. Իր ժամանակին և լրիվ հավաքել և խնայդրամարկղը հանձնել փոխառության գումարները:

գ. Որինակելիորեն կազմակերպել գյուղխորհրդի փոխառությունների լիազորի աշխատանքը:

դ. Ժամանակին և լրիվ կերպով բաժնեգրողներին հանձնել վճարված փոխառության պարտատոմսերը:

յե. Կազմակերպել փոխառությունների խաղարկումների սիստեմատիկ ստուգումը:

9. Որինակելիորեն դնել խնայդրամարկղների ավանդների գծով աշխատանքը

Դրա համար գյուղական խորհուրդը պետք է.

ա. Ձեռք բերել ավանդների պլանի հարյուր տոկոսային կատարում.

բ. Կազմակերպել կոլտնտեսական դրամարկղ՝ դրամարկղն ապահովելով լավ շենքով, որինակելիորեն կազ-



մակերպել փոխառության պարտատոմսերի տերերի և ավանդատուների սպասարկումը:

գ. Լավ կերպով ընտրել խնայդրամարկղի ավանդներ հավաքագրող ակտիվ լիազորներ, լավ ղեկավարել և ոգնել նրանց իրենց աշխատանքում:

## II. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

Ամեն ամիս անցկացնել գանձարկղի և յեռամսյակը մեկ անգամ գյուղխորհրդի ֆինանս - բյուջետային աշխատանքի լիակատար վերստուգում:

Վերստուգիչ հանձնաժողովը պետք է ստուգի.

ա. Դրամական միջոցների ընդունման, հաշվառման, ծախսման, պահպանման և հանձնման ճշտությունը, արժեքաթղթերի հաշվառքն ու պահպանումը, վճարված փոխառությունների ժամանակին բաժնեգրողներին հանձնելը, դրամը հավաքողների աշխատանքի ստուգումը, ինչպես նաև գրանցված ունեցվածքի հաշվառքի, պահպանման և վաճառման ճշտությունը:

բ. Վճարողներին կտրոններ տալու ճշտությունը, դրանք համեմատելով գանձարկղային գրքերի, վճարողների անձնական հաշիվների և կտրոնային գրքույկների կորեշոկների հետ:

գ. Վերստուգման նյութերի ռեալիզացիան, վատնումների, հափշտակումների, միջոցների և ունեցվածքի անորինական ծախսման յերևան հանված գործերը վերադաս կազմակերպությունների և դատական մարմինների քննության հանձնելը:

դ. Գյուղխորհրդի նախագահի, քարտուղարի և

հաշվապահի փոխվելու դեպքում ամբողջ դրամական հաշվետվությունների վերստուգումը:

ժե. Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքում կոլտնտեսականների, կոլտնտեսուհիների, ինչպես նաև աշխատավոր մենատնտեսների ակտիվին մասնակից դարձնելը և գյուղխորհրդի պլենումում ու քաղաքացիների ընդհանուր ժողովներում վերստուգման արդյունքների քննության դնելը, լուսաբանելով այդպիսիք մամուլում, ընտրողների ժողովներում վերստուգիչ հանձնաժողովի գործունեության մասին հաշվետու զեկուցումներ տալը:

## III. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱ – ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

1. Գյուղխորհրդի պլենումում, ֆինաշխատողների ակտիվում, ֆինանսական սեկցիայում, պատգամավորական խմբակներում, աջակցության հանձնաժողովներում լայնորեն մշակել խորհուրդների կոնկուրս-մրցության խնդիրները, Անդրկենտգործկոմի նախագահության որոշումները՝ խորհուրդների կոնկուրսի մասին և կոնկուրսի արդյունքների ցուցանիշների համապատասխան, կոնկրետ պարտավորություններ վերցնել ֆինանսական աշխատանքը լավագույն կերպով կազմակերպելու համար:

2. Կոնկուրսի մասնակցությանը ներգրավել կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների լայն մասսաներին: Կոնկուրսի հարցերն ու ընթացքը լուսաբանել շրջանային մամուլում և պատի թերթերում: Գյուղխորհրդի պլենումում, ֆինսեկցիաներում, աջակցության հանձնաժողովներում, պատգամավորական



խմբակներում, կոլտնտեսականների և մենատնտեսների ժողովներում լայնորեն քննել և ժողովրդականացնել գյուղհարկի, ինքնահարկման և ապահովագրման մասին օրենքները:

3. Ամրապնդել ֆինանսական սեկցիայի և աջակցության հանձնաժողովների աշխատանքները, նրանց աշխատանքում մտցնել պլանայնություն, ստուգել նրանց կազմը և հեռացնել անաշխատունակներին, սիստեմատիկորեն, ոպերատիվ կերպով պարզորոշ ղեկավարել նրանց, ամենօրյա գործնական օգնություն ցույց տալ նրանց, տալ կոնկրետ հանձնարարություններ և ստուգել կատարումը, տանել ֆինսեկցիայի անդամների և ֆինակտիվի աշխատանքի հաշվառում, ֆինսեկցիաների մեջ ընդգրկել լավագույն հարվածային — կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին:

4. Խորհրդի ֆինանսական սեկցիայի, աջակցության հանձնաժողովի, վերստուգիչ հանձնաժողովի կանոնավոր ժողովներ գումարել և ծրագրային ոպերատիվ աշխատանքը կազմակերպել: Ֆինսեկցիայի աշխատանքներում ներգրավել պրոֆմիութենական, կոմյերիտական և գյուղի այլ հասարակական կազմակերպություններին:

5. Կազմակերպել աշխատանքը և հետևել, որպեսզի ֆինանսական սեկցիաները, պատգամավորական խմբակները, աջակցության հանձնաժողովները, ֆինաշխատողները ակտիվորեն լծվեն կոնկուրսին և ձգտեն ֆինանսական աշխատանքը լավ կազմակերպել:

6. Ծավալել աշխատավորական մասսաների լայն նախաձեռնությունը. բարձրացնել դասակարգային զգո-

39.800

նությունը։ Ամենայն ուշադրությամբ վերաբերվել ֆինաշխատողների, ֆինսեկցիաների անդամների, կադրերի ընտրության, աճեցման, պատրաստման, առաջքաշման ու ամրացման գործին, դրա համար առաջ քաշելով լավագույն ակտիվիստներին։

7. Կոլտնտեսությունների, բրիգադիրների, գյուղերի, աջակցության հանձնաժողովների, պատգամավորական խմբակների, սեկցիաների անդամների, պատգամավորների և ակտիվիստների միջև, վերստուգիչ հանձնաժողովների և գյուղում գտնվող հիմնարկների, կազմակերպությունների մեջ լայն մրցություն և հարվածայնություն ծավալել ֆինանսական աշխատանքը լավագույն կերպով կազմակերպելու և վերցրած պարտավորությունները կատարելու համար։

8. Կատարել ընտրողների նակազի ֆինաշխատանքին վերաբերող համապատասխան կետերը և ընտրողների առաջ դնել գյուղխորհրդի և պատգամավորների հաշվետվությունները իրենց գործունեության մասին։

---

# Производственные показатели

## КОНКУРСОВ-СОРЕВНОВАНИЙ СЕЛЬСОВЕТОВ НА ЛУЧШУЮ ОРГАНИЗАЦИЮ ФИНАНСОВОЙ РАБОТЫ

Изд. Оргoтдела — АзЦИКа — 1935

---

Гос. Библиотека
ՀԽՍՌ — Арм. ССР